

Հավելված
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի 27.09.2019թ. թիվ 18/10-Լ որոշման

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄ**

«__»____20__թ. թիվ __-Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՇԱՐԱԴՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության¹ (այսուհետ՝ Կանոնադրություն) հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնադրության 1.3 կետում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ռուսերեն լրիվ անվանման մեջ «Армении» բառը փոխարինել «Армения» բառով:

2) Կանոնադրության 16.5 կետում՝

ա) 13-րդ ենթակետից հանել «յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին» բառերը.

բ) 15-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«15) սահմանում է փաստաբանների պալատի խորհրդի կողմից փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական վերահսկողության կարգը.».

գ) 31-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«31) հաստատում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անվանման, խորհրդանշանի կամ դրոշի օգտագործման կարգը.».

¹ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 11.02.2012թ. թիվ 1/3 որոշմամբ հաստատված կանոնադրության

դ) լրացնել հետևյալ բովանդակությամբ 32-րդ, 33-րդ և 34-րդ ենթակետերով՝
 «32) հաստատում է փաստաբանների պալատի խորհրդի նիստերի անցկացման կարգը (աշխատակարգը).

33) սահմանում է փաստաբանների պալատի փաստաթղթերի պահպանման նվազագույն ժամկետները.

34) իրականացնում է Օրենքով, փաստաբանի վարքագծի կանոնադրքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:»:

3) Կանոնադրության 16.14 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.14. Փաստաբանների պալատի խորհրդի նիստն իրավազոր է, եթե հրավիրվել է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և նիստին մասնակցում է խորհրդի առնվազն 7 (յոթ) անդամ, այդ թվում՝ խորհրդի նախագահը (նախագահի պաշտոնակատարը), բացառությամբ կարգապահական գործով խորհրդի նիստի: Կարգապահական գործով խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի առնվազն 6 (վեց) անդամ, այդ թվում՝ խորհրդի նիստը նախագահողը: Այն դեպքում, երբ կարգապահական գործով խորհրդի նիստը երկու կամ ավել անգամ չի կայանում խորհրդի նիստը նախագահողի բացակայության պատճառով, ապա խորհուրդը կարող է առանց նախագահողի մասնակցության նիստ գումարել և նշանակել նոր նախագահող:»:

4) Կանոնադրության 16.17 կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Սույն կանոնադրության 16.5 կետի 1-ին, 2-րդ, 15-րդ, 21-րդ, 23-րդ և 32-րդ ենթակետերում սահմանված հարցերով որոշումները խորհուրդն ընդունում է խորհրդի անդամների ձայների առնվազն 3/4-ով:»:

5) Կանոնադրության 16.18 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.18 Յուրաքանչյուր քվեարկությունից առաջ Փաստաբանների պալատի խորհրդի նախագահը (նիստը նախագահողը) կրկնում է քվեարկության դրվող հարցը ճշգրիտ ձևակերպմամբ, հաշվում և բարձրաձայն հայտարարում է կողմ արված ձայների թիվը, այնուհետև նույն կարգով հաշվում է դեմ ու ձեռնպահ ձայների թիվը, եթե խորհրդի նիստերի անցկացման կարգով այլ ընթացակարգ նախատեսված չէ:»:

6) Կանոնադրության 16.23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.23. Պալատի խորհուրդը թղթային արձանագրություն կազմելու փոխարեն կարող է օգտագործել ձայնագրության կամ տեսագրության համակարգ: Տեխնիկական համակարգի միջոցով կատարված ձայնագրությունը (տեսագրությունը) պահպանվում (ձայնագրվում) է լազերային սկավառակի կամ այլ նյութական կրիչի վրա: Ձայնագրության (տեսագրության) հիման վրա խորհրդի քարտուղարի կողմից կազմվում է տեղեկանք, որտեղ նշվում են խորհրդի ներկա անդամների անունները, ազգանունները, օրակարգի հարցերը, ընդունված որոշումների եզրափակիչ մասերը և քվեարկության արդյունքները (բացառությամբ գաղտնի քվեարկության հարցերով): Փաստաբանների պալատի խորհրդի կողմից ընդունված որոշումները կազմվում են առանձին ակտի (որոշման) ձևով,

բացառությամբ խորհրդի նիստի ժամանակ կայացված ընթացակարգային որոշումների: Փաստաբանների պալատի խորհրդի՝ առանձին ակտի ձևով կայացված որոշումը ստորագրում է խորհրդի նախագահը (կարգապահական գործով խորհրդի նիստը նախագահողը): Կարգապահական գործով խորհրդի նիստը նախագահողի կողմից խորհրդի կայացրած որոշումը ստորագրելուց խուսափելու դեպքում, խորհրդի որոշումը ստորագրում է խորհրդի այլ անդամ՝ խորհրդի նիստերի անցկացման կարգի համաձայն:»:

7) Կանոնադրության 16.30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.30. Փաստաբանների պալատի խորհրդի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել խորհրդի նիստերին.

2) խորհրդի նիստին մասնակցության անհնարինության դեպքում խորհրդի նիստերի անցկացման կարգի համաձայն տեղեկացնել փաստաբանների պալատին.

3) կարգապահական գործով նիստը նախագահող նշանակվելու դեպքում բարեխղճորեն և ժամանակին՝ փաստաբանների պալատի գտնվելու վայրում ստանալ կարգապահական վարույթը, կատարել կազմակերպչական անհրաժեշտ բոլոր գործողությունները, կազմել որոշման նախագիծը, խորհրդի նիստերի անցկացման կարգին համապատասխան խորհրդի մյուս անդամներին իրազեկելուց հետո ստորագրել այն և հանձնել փաստաբանների պալատին՝ գտնվելու վայրում.

4) պահպանել փաստաբանների պալատի այն փաստաթղթերի կամ տեղեկությունների գաղտնիությունը, որոնք հրապարակային չեն, այդ թվում՝ կարգապահական գործով գաղտնիք պարունակող տեղեկությունները, փաստաբանների պալատի անդամների կամ աշխատակիցների անձնական տվյալները, ինչպես նաև կարգապահական գործով որոշման կայացման, քվեարկության, որոշման կազմման ժամանակ քննարկումների հետ կապված տեղեկությունները.

5) հարգանքով վերաբերվել խորհրդի մյուս անդամներին, փաստաբանների պալատի աշխատակիցներին և խորհրդի նիստին ներկա այլ անձանց.

6) ձեռնպահ մնալ փաստաբանների պալատը (այդ թվում՝ մարմինները) վարկաբեկող գործողություններից կամ արտահայտություններից, ինչը չի սահմանափակում խորհրդի անդամի քննադատության իրավունքը:»:

8) Կանոնադրության 16.34-րդ կետում՝

ա) 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) խորհրդի անդամի կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում, այն է՝

ա. մեկ փարվա ընթացքում առանց հարգելի պատճառի փարբեր օրերի հրավիրված 3 (երեք) անընդմեջ նիստերին բացակայելու դեպքում.

բ. մեկ փարվա ընթացքում առանց հարգելի պատճառի ընդհանուր 7 (յոթ) փարբեր օրերի հրավիրված նիստերին բացակայելու դեպքում.

գ. սույն կանոնադրության 16.30-րդ կետի 3-6-րդ ենթակետերից որևէ մեկի պահանջը մեկ փարվա ընթացքում առնվազն երեք անգամ (նույն ենթակետի պահանջը) կոպիտ կերպով խախտելու դեպքում:

Սույն ենթակետում նշված հարգելի պատճառը, ինչպես նաև կոպիտ խախտումը սահմանվում է խորհրդի աշխատակարգով:»:

բ) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով.

«3) խորհրդի անդամ փաստաբանի արտոնագրի գործողության կասեցման կամ դադարեցման դեպքում՝ խորհրդի համապատասխան որոշման ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից:»:

9) Կանոնադրության 16.35-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.35. Սույն կանոնադրության 16.34-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում Փաստաբանների պալատի խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող է դադարեցվել Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ՝ առնվազն խորհրդի 9 անդամի կողմ ձայնով: Խորհրդի այն անդամը, որի լիազորությունների դադարեցման հարցն է քննարկվում, չի մասնակցում քվեարկությանը, սակայն իրավունք ունի անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել խորհրդի տվյալ նիստին, ներկայացնել ապացույցներ և բացատրություններ:»:

10) Կանոնադրության XIX գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.5, 19.6, 19.7 և 19.8 կետերով՝

«19.5. Գործ նախապատրաստող անձի լիազորություններն ավարտվում են հաջորդ կազմի ընտրվելուց հետո՝ լիազորություններն սրանձնելու պահից:

19.6. Գործը նախապատրաստող անձը պարտավոր է՝

1) իր հետ կապ հաստատելու համար՝ հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն գրությամբ ներկայացնել փաստաբանների պալատին, իսկ դրանց փոփոխության դեպքում փասնհինգ օրվա ընթացքում փոփոխված տվյալները ներկայացնել փաստաբանների պալատ:

2) կարգապահական գործով նախապատրաստող նշանակվելու (գործն իրեն մակագրվելու) դեպքում բարեխղճորեն և ժամանակին՝ փաստաբանների պալատի գտնվելու վայրում սրանալ կարգապահական վարույթը, կատարել կազմակերպչական անհրաժեշտ բոլոր գործողությունները, կազմել եզրակացությունը, ստորագրել այն և վարույթի հետ միասին (այդ թվում՝ ձեռք բերված լրացուցիչ նյութերը) հանձնել փաստաբանների պալատին՝ գտնվելու վայրում.

3) պահպանել կարգապահական վարույթով այն տեղեկությունների գաղտնիությունը, որոնք հրապարակային չեն.

4) խորհրդի որոշման հիման վրա ներկայանալ խորհրդի նիստին և պատասխանել խորհրդի անդամների հարցերին.

5) ձեռնպահ մնալ փաստաբանների պալատը (այդ թվում՝ մարմինները) վարկաբեկող գործողություններից կամ արտահայտություններից, ինչը չի սահմանափակում գործ նախապատրաստողի քննադատության իրավունքը:»:

19.7. Գործ նախապատրաստող անձի լիազորությունը վաղաժամկետ դադարում է՝

1) Փաստաբանների պալատին տրված գրավոր դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելու հաջորդ օրվանից,

2) Գործ նախապատրաստող անձի կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում, այն է՝

ա. մեկ տարվա ընթացքում առանց հարգելի պատճառի 3 (երեք) կարգապահական վարույթ ստանալուց հրաժարվելու կամ խուսափելու դեպքում.

բ. սույն կանոնադրության 19.6-րդ կետի 1-5-րդ ենթակետերից որևէ մեկի պահանջը առնվազն երեք անգամ (նույն ենթակետի պահանջը) խախտելու դեպքում.

3) գործ նախապատրաստող անձ հանդիսացող փաստաբանի արտոնագրի գործողության կասեցման կամ դադարեցման դեպքում՝ խորհրդի համապատասխան որոշման ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից:

19.8. Սույն կանոնադրության 19.7-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում գործ նախապատրաստող անձի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում է Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ: Գործ նախապատրաստող անձն իրավունք ունի անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել խորհրդի տվյալ նիստին, ներկայացնել ապացույցներ և բացատրություններ:»:

11) Կանոնադրության 20.12 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«20.12. Փաստաբանների պալատի անդամը փաստաբանների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումում պետք է նշի՝

1) անունը, հայրանունը և ազգանունը.

2) արտոնագրի համարը.

3) հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն.

4) իր մասնագիտացումը:»:

12) Կանոնադրության XX գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.19 կետով.

«20.19. Փաստաբանների պալատի հետ փոխհարաբերություններում (այդ թվում՝ կարգապահական գործով) փաստաբանը համարվում է իր հետ կապված գործընթացի վերաբերյալ պատշաճ ծանուցված կամ համապատասխան փաստաթուղթը պատշաճ ստացած, եթե ծանուցումը կամ փաստաթուղթը հասցեատեր փաստաբանին՝

1) առձեռն հանձնվել է, կամ

2) ուղարկվել է փոստային կապի միջոցով՝ հետադարձ ծանուցմամբ, եթե ծանուցումն ուղարկելուց հետո մինչև տասնչորսերորդ օրը ստացվում է հետադարձ ծանուցում (եթե փաստաբանը փոխել է իր հասցեն և գրավոր չի տեղեկացրել հասցեն փոխելու մասին, ապա փաստաբանի՝ փաստաբանի ցուցակում ընդգրկվելու մասին դիմումում նշված հասցեով ուղարկված ծանուցումը համարվում է պատշաճ հասցեով ուղարկված, եթե այդ հասցեում որևէ անձ փաստացի ստացել է ծանուցումը կամ փաստաթուղթը), կամ

3) ուղարկվել է էլեկտրոնային փոստի հասցեով, և եռօրյա ժամկետում առկա է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստում կամ փաստաբանը էլեկտրոնային փոստի միջոցով կամ այլ եղանակով արձագանքել է պալատի էլեկտրոնային գրությանը:

Եթե ծանուցագիրը կամ փաստաթուղթը փոստային կապի միջոցով ուղարկելուց հետո տասնչորս օրվա ընթացքում հետադարձ ծանուցում չի ստացվում և դեռևս առկա չէ էլեկտրոնային ծանուցումը կարդալու մասին էլեկտրոնային հավաստում,

ապա ծանուցումը կամ փաստաթուղթը հրապարակվում է փաստաբանների պալատի պաշտոնական ինտերնետային կայքում: Տվյալ դեպքում փաստաբանը համարվում է պատշաճ ծանուցված կամ փաստաթուղթը ստացած՝ ծանուցումը կամ փաստաթուղթը կայքում հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրվանից:»:

13) Կանոնադրությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ XX¹ գլխով՝

«XX¹ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

20.20. Այլ պետության փաստաբանը Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեություն իրականացնելու համար կարող է հավատարմագրվել մեկ տարի ժամկետով կամ կոնկրետ գործով՝ սույն կանոնադրությամբ և Պալատի խորհրդի կողմից հաստատված կարգին համապատասխան: Հավատարմագիրը տրվում է փաստաբանի լիարժեք իրավունքներով (բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական կամ ծառայողական գաղտնիքին առնչվող հարցերով իրավաբանական օգնություն ցույց տալու իրավունքի) կամ ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբանի (սույն գլխում այսուհետ՝ օժանդակող փաստաբան) հետ համատեղ մասնակցության պայմանով փաստաբանի իրավունքներով:

20.21. Առաջին անգամ հավատարմագրելու մասին դիմում ներկայացրած այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալու հարցը որոշում է Պալատի խորհուրդը՝ դիմումը ստանալու օրվանից երեսուն օրվա ընթացքում: Երկրորդ կամ հերթական անգամ հավատարմագրելու մասին դիմում ներկայացրած այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալու հարցը որոշում է Պալատի նախագահը՝ դիմումն ստանալու պահից տասնհինգ օրվա ընթացքում:

20.22. Օժանդակող փաստաբանի հետ մասնակցության իրավունքով հավատարմագիրը տրվում է խորհրդի կողմից սահմանված պարզեցված կարգով (առանց ՀՀ օրենսդրության մասին հարցազրույցի կամ ստուգման)՝ այլ պետության փաստաբանի դիմումի հիման վրա՝ օժանդակող փաստաբանի գրավոր համաձայնության և Պալատի խորհրդի սահմանած այլ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:

20.23 Փաստաբանի լիարժեք իրավունքներով հավատարմագիրը տրամադրելու համար Պալատի խորհուրդը իր կողմից սահմանած կարգով (հարցազրույցի, թեստի կամ այլ եղանակով) պարզում է այլ պետության փաստաբանի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը տիրապետելու հարցը: Հայոց լեզվին չտիրապետող այլ պետության փաստաբանը Պալատի խորհրդի նիստին մասնակցում է իր կողմից և իր հաշվին հրավիրած թարգմանչի հետ միասին:

20.24. Հավատարմագիր տալու և հավատարմագրի գործողությունը դադարեցնելու կարգը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը:»:

2. Վերոհիշյալ փոփոխությունների և լրացումների հիման վրա Կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ: